ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

___ _____ 2025 թվականի №___-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի №522-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը ***որոշում է***.

1. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2019 թվականի դեկտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության էլեկտրաէներգետիկական շուկայի հաղորդման ցանցային կանոնները հաստատելու և Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2017 թվականի մայիսի 17-ի №161-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» №522-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) հավելվածի՝

   1) 2-րդ կետի 53.1-ին ենթակետը լրացնել հետևյալ բովանդակությամբ «դ» պարբերությամբ.

      «դ. էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիայով ամրագրված՝ էլեկտրակայանի հզորություն ավելացրած կամ էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիայում վերակառուցման ժամանակահատված ստացած արտադրող, բացառությամբ էլեկտրական էներգիայի գնման երաշխիք ունեցող Արտադրողի.».

   2) 183.1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

      «183.1. Էլեկտրաէներգետիկական համակարգի հուսալիության և անվտանգության ցուցանիշների խախտման կամ դրա վտանգի դեպքում Համակարգի օպերատորն

իրավունք ունի Սահմանափակման ենթակա արտադրողին տալ էլեկտրական էներգիայի՝ էլեկտրական ցանց առաքումը դադարեցնելու կամ սահմանափակելու վերաբերյալ կարգավարական կարգադրություն՝

1) 2024 թվականի հուլիսի 1-ից 2025 թվականի ապրիլի __-ն ընկած ժամանակահատվածում Սահմանափակման ենթակա արտադրող դարձած անձանց առավելագույնը 1080 ժամով, բայց ոչ ավելի, քան օրական ութ ժամով՝ մարտի 1-ից մինչև հոկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում,
2) 2025 թվականի ապրիլի __-ից հետո Սահմանափակման ենթակա արտադրող դարձած անձանց՝ առավելագույնը 2200 ժամով՝ օրացուցային տարվա ընթացքում:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2025 թվականի ապրիլի __-ից: Մինչև սույն որոշումն ուժի մեջ մտնելը էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիա ստանալու հայտ ներկայացրած և սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգի համաձայն էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիա ստացած, ինչպես նաև մինչև սույն որոշումն ուժի մեջ մտնելը էլեկտրական ցանցին միացման պայմանագրի կնքման (տեխնիկական պայման ստացման) և էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի առևտրային կանոններով սահմանված կարգով էլեկտրաէներգետիկական շուկայի կառավարման ծրագրում գրանցման համար դիմած և շուկայի կանոնների համաձայն միացման պայմանագիր կնքած (տեխնիկական պայման ստացած) և շուկայի կառավարման ծրագրում գրանցված՝ Որոշման համաձայն Սահմանափակման ենթակա արտադրողների էլեկտրական էներգիայի՝ էլեկտրական ցանց առաքումը դադարեցնելու կամ սահմանափակելու վերաբերյալ կարգավարական կարգադրությունը էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորը տալիս է Որոշման հավելվածի 183.1-ին կետի 1-ին ենթակետի համաձայն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Մ. ՄԵՍՐՈՊՅԱՆ**

ք. Երևան
__ _____ 2025թ.